


Հաստատված է  
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության  
«02» «09» 2020թ. թիվ 167/25 որոշմամբ  
Վարչության նախագահ  
  
Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտնում 03.09.2020թ.-ից

Հրապարակման ամսաթիվը՝ 02՝ սեպտեմբեր՝ 2020թ.  
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասների համար՝  
Հեռախոս՝ +37410-510-991, +374-8000-8686

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**  
**«My Transfer» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ԵՐԵՎԱՆ 2020**

Անվանում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1

Էլեկտրոնային հասցե՝ bank@aeb.am

Կայք՝ www.aeb.am

Հեռախոս՝ +37410- 510991, +374-8000-8686

Ֆաքս՝ (37410) 53-89-04

1. Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաճախորդներին «My Transfer» ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն) մատուցելու պայմանները և էական այլ տեղեկությունները:
2. Ամփոփագիրը Հաճախորդի պահանջով տրամադրվում է թղթային եղանակով, ինչպես նաև հասանելի ու տեսանելի է Բանկի գործունեության բոլոր վայրերում (Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր):
3. Ծառայության ամբողջական պայմաններին Հաճախորդը կարող է ծանոթանալ Ամփոփագրից, Բանկի ինտերնետային կայքէջից կամ պարզել դրանք կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
4. Ամփոփագրի դիմային էջում Ծառայության գործողության ժամկետը չնշվելու դեպքում՝ Ամփոփագրի հրապարակման ամսաթվից հետո Ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել, ինչը Հաճախորդը կարող է պարզել կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
5. Ծառայությունը հնարավորություն է ընձեռում հաճախորդի անվամբ միջազգային/տեղական վճարային համակարգերով և այլ վճարահաշվարկային համակարգերի միջոցով (քարտային, MOBILE/ ONLINE BANKING) կատարված դրամական փոխանցումները (այսուհետ՝ Փոխանցում) վճարելու Բանկում գործող Հաճախորդի հաշվին (այսուհետ՝ Հաշիվ):
6. Փոխանցումը կատարելու համար Հաճախորդը՝
  - 6.1. Բանկում գրանցված իր հեռախոսահամարից SMS հաղորդագրություն է ուղարկում Բանկի 099158686 հեռախոսահամարին և հաղորդագրության մեջ ճշգրիտ նշում է դրամական փոխանցում իրականացնող անձի անունը, ազգանունը, գումարի ստացման վերահսկիչ կոդը (փոխանցման ունիկալ կոդ), գումարի չափը թվերով և գումարի արժույթը, կամ
  - 6.2. MOBILE BANKING կամ ONLINE BANKING համակարգերով հաղորդագրություն է ուղարկում Բանկ, որում նշում է դրամական փոխանցում իրականացնող անձի անունը, ազգանունը, գումարի ստացման վերահսկիչ կոդը (փոխանցման ունիկալ կոդ), գումարի չափը թվերով և գումարի արժույթը, կամ
  - 6.3. Բանկում գրանցված իր հեռախոսահամարից կատարում է հեռախոսազանգ Բանկի 010 510991 հեռախոսահամարին և նույնականացման նպատակով ճշգրիտ հայտնում է իր անունը, ազգանունը, իրեն դրամական փոխանցումը կատարողի անունը, ազգանունը, իրեն փոխանցված գումարի ստացման վերահսկիչ կոդը և բանկային գաղտնաբառը (տեղեկատվական կոդը):
  - 6.4. Հաճախորդի նույնականացման 6.1., 6.2. և 6.3. կետերով պահանջվող տվյալների ճշգրիտ չնշվելը նշանակում է, որ Հաճախորդը չի նույնականացվել, ինչը հիմք է Ծառայությունը Հաճախորդին չմատուցելու համար: Հեռախոսազանգով կատարված խոսակցությունը կարող է ձայնագրվել Բանկի կողմից:
7. Փոխանցում կատարելու համար Ամփոփագրի 6-րդ կետով սահմանված պահանջների համապատասխանության դեպքում՝ մեկ բանկային օրվա ընթացքում Փոխանցումը վճարվում է Հաշվին, իսկ անհամապատասխանության դեպքում՝ Փոխանցման վճարումը չի կատարվում և այդ մասին Հաճախորդին հայտնվում է հեռախոսազանգով կամ SMS հաղորդագրությամբ:
8. Փոխանցված գումարի արժույթը քարտային հաշվի արժույթից տարբերվելու դեպքում՝ փոխանցված գումարի փոխարկումը կատարվում է Հաշվի արժույթի վաճառքի համար տվյալ պահին Բանկում սույն ծառայության համար սահմանված փոխարժեքով:
9. Հաղորդագրությունները կամ հեռախոսազանգերը Բանկի կողմից ընդունվում/իրականացվում են յուրաքանչյուր աշխատանքային օր 9:00-ից մինչև ժամը 17:30-ն: